

Ամառային բարեգործական երեկույթի հասույթը կծառայի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի տեխնոլոգիական համալրմանը

Հունիսի 27-ին Նյու Յորքի «Բաուերի» հյուրանոցում հավաքված շուրջ 300 հյուրերը մասնակցում էին Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) 8-րդ ամենամյա ամառային բարեգործական երեկույթին: Տոնում էին ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի բացումը:

Կենտրոնում գրանցվող անսպասելիորեն մեծ թվով բոլոր ուսանողներին ծրագրերում ընդգրկելու և նրանց ուսումնառությունը լիարժեք կազմակերպելու համար հանգանակվել է մոտ 30,000 ԱՄՆ դոլար՝ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնը հավելյալ iPad-ներով և տեխնոլոգիական այլ սարքավորումներով համալրելու նպատակով:

Որպես ստեղծագործականության և նորարարության օրինակելի մոդել՝ ՔՈԱՖ ՍՄԱՐԹ-ը նպատակ ունի ամբողջ Հայաստանում հիմնել գերժամանակակից կրթական կենտրոններ, որոնք գյուղական համայնքների բնակիչների համար ոչ ֆորմալ կրթական հնարավորություններ կտրամադրեն:

Մայիսի 27-ին Հաստանի Լոռու մարզում Հայաստանի մանուկներ հիմնադրամի ՍՄԱՐԹ կենտրոնի երկար սպասված բացման արարողությանը ներկա էին մոտ 1000 հյուրեր ամբողջ աշխարհից:

«Եթե ուզում ես ոգեշնչել մարդկանց, հատկապես հայ երիտասարդներին, պետք է կառուցել մի այնպիսի բան, որ բացառիկ ազդեցություն կունենա: Իմ ընկերոջ՝ Թոնի Շաֆրազյանի խոսքերն: Ու մենք Հայաստանի գյուղական այս չքնաղ բնության գրկում ստեղծեցինք ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնը»,- ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի բացման արարողությանը իր ողջույնի խոսքում նշեց Հայաստանի մանուկներ հիմնադրամի հիմնադիր և գործադիր տնօրեն **Կարո Արմենը:**

ՍՄԱՐԹ կենտրոնի հայեցակարգի **չորս** հիմնասյուններն են **նորարարությունը և ստեղծագործականությունը, լեզուն և հաղորդակցությունը, ծեռներեցությունը և տեղական տնտեսական զարգացումը, ակտիվ քաղաքացիությունը և անձնային զարգացումը:**